էր ցուցադրել իրենց ուժերը և հրապարակային բնոյթ տալ պայքարին Հայաստանի իշխանութեան դէմ*)։

Ցունս. 31ի ձերբակալութիւնները նիւթ դարձան և խորհրդարանական հարցապնդման։ Փետր. 20–ին սոց.–յեղափոխական պատգամաւոր Վահան Մինախորեանը կառավարութեան ուղղեց հետևեալ հարցապնդումը.

«Ցունս. 31–ին ներքին գործոց նախարարի կարգադրութեամբ Երևանում և Դիլիջանում ձերբակալուել են մի քանի անձնաւորութիւններ. պատճառաբանութիւնն այն է, թէ յիշեալ անձինք ունեցել են հակապետական և հակակառավարչական ընթացք, սակայն, նրա կարգադրութեան մէջ չի յիշատակւում որև է օրէնք, ազդ կամ, նոյնիսկ բերանացի նախազգուշացում, որի հիման վրա կարելի լինէր արգելափակման ենթարկել քաղաքացիներին։ Ժամ. Կառավարութեան հրատարակած օրէնքը, որի վրա հիմնուած պիտի լինի յիշեալ կարգադրութիւնը, բոլորովին այլ բան է ասում, և հէնց այդ տեսակէտից կատարուած փաստը ապօրինութիւն է։

Միւս կողմից, պարզ պիտի լինէր, թէ քաղաքական հոսանքի դէ՞մ է ուղղուած այդ հալածանքը, թէ՞ սոսկ անհատների։ Եթէ առաջինն է, ապա դա ապօրինութիւն է, որովհետև քաղաքական հոսանքը պիտի ազատ լինի որև է հետապնդումից. եթէ երկրորդն է, ապա ո՞ւր է այն կոնկրետ մեղադրանքը նրանց կատարած գործերի։ Նրանց հրատարակած մէկ գիրքը, բաց թողած թռուցիկը չեն պարունակում որև է հակապետական կամ հակակառավարչական բովանդակութիւն, իսկ տաճիկ փաշաների հետ համաձայնութիւն կնքած լինելու լուրերը փաստացիօրէն ապացուցած չեն։ Այսպէս նայելով խնդրին՝ սոցիալիստ–յեղափոխական ֆրակցիան կատարուած ձերբակալութիւնները համարում է ապօրինի և առաջարկում է ազատել նրանց»։

Զուտ ձևական–իրաւաբանական տեսակէտից սոց.–յեղափոխականների մեղադրանքը, գուցէ, և իրաւացի էր. այն ժամանակները պետական ո՞ր պաշտօնեան էր այնքան հմուտ գոյութիւն ունեցող օրէնքների մէջ, որ կարողանար անթերի կերպով, պետական օրէնքի բոլոր պահանջներին համապատասխան ձևակերպել իր գործերը։ Սակայն, ըստ էութեան սոցիալիստ–յեղափոխականները, ի հարկէ, անարդար էին. նրանք շատ լաւ ծանօթ էին բոլշևիզմի էութեան և հայ բոլշևիկների գործունէութեան բնոյթին, որպէսզի կարողանային պնդել, թէ՝ «նրանց հրատարակած մէկ գիրքը, բաց թողած թռուցիկը չեն պարունակում որև է հակապետական կամ հակակառավարչական բովանդակութիւն»։ Եւ նախարարի տուած բացատրութիւններն ու յետագայ վիճաբանութիւնները լիովին հաստատեցին այս պարագան։

---

*) Արշակ Զոհրաբեանը ռուսական սոցիալ–դեմոկրատիայի յայտնի դէմքերից էր և մտերիմ բարեկամ Ժորդանիայի ու Ռամիշվիլիի։ Ռուսական յեղափոխութիւնից յետոյ գործում էր կովկասում, վրաց մենշևիկների հետ միասին, հակառակորդ էր բոլշևիկների և դաշնակցականների։ Վրաստանի անկախութիւնից յետոյ, անցել էր ընդդիմադիրների կողմը և, իբրեւ միջազգայնական, ճնշադատում էր վրաց մենշեւիկների արարքները։ Այս պատճառով, հալածանքի ենթարկուեց Վրաստանում և իր երէկւայ ընկերների ձեռքից ազատուելու համար՝ փախաւ Երևան։ Հայաստանի կառավարութիւնը խոստացել էր նրան կարեւոր մի պաշտօն, սակայն, նա վարակուեց բծաւոր տիֆով և յունուար 4–ին մեռաւ։